ՎՐԵԺ ՎԱՐԴԱՆՅԱՆ
պատմական գիտ. դոկտոր

ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻՆ ԻՐ ԴԱՐԱՇՐՋԱՆԻ ԼՈՒՅՍԻ ՆԵՐՔՈ

Մկրտիչ Սարգսյանի «Գրիգոր Նարեկացի» պատմավեպում (Երեւան, 1989) գեղարվեստական շնչով վեր են հանվում հանճարեղ տաղերգուի կյանքի ալեհույզ ելեւէջները՝ հասարակական-քաղաքական իրողությունների լայն ընդգրկմամբ: Գրիգոր Նարեկացու մասին սկզբնաղբյուրներում եղած աղքատիկ տեղեկություններն ի մտի առնելով՝ գրողը վարպետորեն հյուսում է նրա կյանքի ուշագրավ դրվագները՝ ժողովրդի կեցության ոլորտի պատկերման հետ միաժամանակ: Ընթերցողի առջեւ հառնում է ունայնաշունչ ժամանակների համայնապատկերը: Մեր առջեւ է եւ մեզ հետ Գրիգոր Նարեկացին՝ հանճարեղ մտածողն ու տաղերգուն, մարդասերը՝ սիրտը ծվատող հեծեծանքներով, հոգին լլկող խոհերով: Վասպուրական աշխարհի հռչակավոր Նարեկավանքի աղոթամրմունջ լռության մեջ տաղերը երկնող բանաստեղծը մեզ է ներկայանում իր ապստամբ էությամբ, ընդվզուն ոգով՝ մեղադրվելով թոնդրակյանների եկեղեցամերժ աղանդին հարելու մեջ: Նարեկացին ապրում է ծանր ողբերգություն՝ չկարողանալով ազատվել հակասական խոհերից, քանի որ, ինչպես նշում է Մկրտիչ Սարգսյանը, այդ աղանդին հարելը «կնշանակեր դավաճանել Աստծուն ու Եկեղեցուն եւ հակառակը: Եւ բանաստեղծն ապրեց այս դժվարին դրաման՝ ինքնաբզկտմամբ, ինքնաճաղկումով, ինքնայրումով: Ծառացավ Աստծո դեմ, ընդվզեց եւ անիծեց թոնդրակյաններին: Քննության առավ աշխարհի սեւն ու սպիտակը» (էջ 16): Թեեւ Նարեկացին մոտ 1003 թ. Մոկսի Կճավ գյուղի մոտակայքի Ս. Աստվածածին վանքի միաբան եւ նշանավոր գիտուն Մուշեղի դեմ գրեց իր «Թուղթը»՝ նզովելով թոնդրակյաններին («Գիրք թղթոց», Թիֆլիս, 1901, էջ 498-502), սակայն Սարգսյանը, գեղարվեստորեն պատկերելով Գրիգոր Նարեկացու եւ Մուշեղ վարդապետի հարաբերությունները, դրական երանգներ է հաղորդում դրանց (այս մասին խոսք կլինի ստորեւ):

«Պատմավեպը, - գրում է Մ. Սարգսյանը, - պատմության վերայցելությունն է դեպի մեր օրերն ու ժամանակները եւ պատմական փորձի հաղորդումը մեր սերունդներին» (Մ. Սարգսյան, Լույս լեռան պես, Երեւան, 1990, էջ 261): Եւ եթե պատմավեպի հերոսը «լայն աղերսներ չունի արդիականության հետ, ապա

վերածվում է պատմության միգամածություններից հարություն առած ուրվականի... առանց որեւէ նշանակալից հետք թողնելու ընթերցողների սրտերում»: Պատմավեպն անհրաժեշտ է «պատմության փորձը ներկային հաղորդելու եւ, այո՛, ներկային հպատակեցնելու ու ծառայեցնելու նպատակով» (անդ): Պատմավեպի հեղինակը, նշում է Մ. Սարգսյանը, «կարիք ունի արթնացնելու ժողովրդի այն ավանդներն ու խորհուրդները, որոնք կարող են ձեռք մեկնել ժամանակակից սերնդին, ուսուցանել ապրելու, գոյատեւելու եւ հարատեւելու խորհուրդը...» (անդ, էջ 326):

Մ. Սարգսյանը գեղագիտական հավատամքով կարողացել է խոսել դարերի հետ, գրողի իրավունքով Նարեկացու կյանքը երփնազարդելով հետաքրքիր (երբեմն հնարածո) եղելություններով՝ նորովի հայտնաբերելով հանճարեղ տաղերգուին եւ, հնարավորին չափ հարազատ մնալով պատմությանը: Վեպում արտացոլված են ոչ միայն Գրիգոր Նարեկացու հոգու բռնկումները, նրան թեւավորող երազներն ու խոհերը, այլեւ ժողովրդի կենսավիճակը, թոնդրակյան շարժման դեմ հուզած հալածանքների ալիքը, ծանրամեղ ախտերով ու դատապարտելի արարքների սիրահար եղծված հոգիների անգոսնելի վարքագիծը: Նարեկացին ծանր է ապրում այդ ամենը: Նրա «հոգում կուտակված ցավը պոռթկալու հնար ու ելք չունենալով՝ դառնում էր խղճի ձայն ու արցունք» («Գրիգոր Նարեկացի», էջ 21):

Ժամանակի հասարակական կյանքի ցավագին վայրիվերումների լայն հետնախորքի վրա Մ. Սարգսյանը պատկերում է հասարակ ժողովրդի կյանքը, իհարկե, նաեւ ազատագնյա գործիչներին, «նրանց, ովքեր Հայաստան աշխարհի ամենամեծ՝ Արծրունյաց նախարարության ուժն էին, միտքն ու զորությունը» (անդ, էջ 31):

Գրիգոր Նարեկացին համոզված է, որ հավատը հոգու հարստություն է պարգեւում, քանզի «Աստված սեր է, նա պարտադրում է սերը որպես աստվածային պարգեւ, որպես հոգու մաքրություն եւ ազնվություն... առանց սիրելու, առանց սիրո կյանքը նորոգելու եւ շարունակելու հնարքն անկարելի կդառնա: Առանց սիրո չի ծագի արեւն աշխարհի վրա» (էջ 34): Թեեւ Նարեկացու չարչարաբեկ հոգին բզկտում են դարաշրջանի դարամերժ ու հակասական իրողությունները, սակայն նա իր հանճարի ուժով վեր է հանում հայրենի աշխարհի անմման գեղեցկությունն ու հմայիչ տեսարանները, որոնք ներդաշնակում են սրբահեզ այդ հանճարի քերթողական ավյունին: Նարեկացին հաղորդակից է երկրային վայելքներին, զմայլվում է հայրենի բնությամբ, լսում գուսանների ախորժալուր երգերը, հաճույքով դիտում լեռնական պարերը, լարախաղացներին ու ծաղրածուներին (էջ 34-35): Վեպում Նարեկացին լիարյուն տղամարդ է՝ սիրատոչոր սրտով: Գեղանի Դրախտիկը «նրա աչքերի առջեւ ասես փոխարկվում էր աստվածուհու եւ արագորեն հեռանում իրենից»: Միաժամանակ Նարեկացին, չկարողանալով լիովին թոթափել միաբանին պարտադրված դոգմատիկ կապանք-

ները, երկյուղով մտապանջվում է. «Ես իրավունք չունեմ հոգիս մերկացնելու այս գեղեցկուհու առջև, քանզի կկործանեմ ոգիս, որ հանձնել եմ Տիրոջ ողորմածությանն ու նրան ծառայելուն» (էջ 37-38): Բայց նաև համոզված է, որ «առանց սիրո կյանքն ունայնություն է», եւ Աստծուց խնդրում է երկրային սիրո համար ներել իրեն, չթողնել, որ այն բռնությամբ սպանեն իր մեջ, ինչի հետեւանքով պաշտամունքն այլեւս չի փոխվի սիրո (էջ 226): Միաժամանակ դիմելով Բարձրյալին՝ ասում է. «Ցանկանում եմ սիրելով պաշտել քեզ» (էջ 38): Որքան էլ Նարեկացու հոգին կաշկանդված էր վանականի անձուկ կյանքի շղթաներով, նա, ի դեմս Դրախտիկի, «հայտնագործել էր իր ասպվածուհուն... ափեափ ենթարկված էր սիրույն եւ լինելության, արարում պահանջող փաղերի իշխանությանը» (էջ 41):

Վաղ մանկությունից նրա հոգին սնուցվում էր կրոնական գաղափարներով: Հայրը՝ Անձեւացիք գավառի եպիսկոպոս Խոսրովը, կարծում էր, որ «սէր աշխարհիս թշնամութիւն առ Աստուած» (Խոսրով Անձեւացի, Մեկնութիւն ժամակարգութեան, Օրթագիւղ, 1840, էջ 94): Պապանի Գրիգորը եւ եղբայրը՝ Հովհաննեսը, ուսանել են Ռշտունիք գավառի Նարեկ գյուղի վանքում, իրենց մոր հորեղբոր որդի, վանքի առաջնորդ Անանիայի հովանու ներքո:

Վեպում Գրիգոր Նարեկացին օժտված է աշխարհականի գծերով, որոնք, անշուշտ, թեեւ իրական չեն, սակայն ավելի ամբողջական են դարձնում նրա գեղարվեստական պատկերը՝ համակելով դարաշրջանի ապրած մտավոր զարթոնքի շնչով: Անանիայի թողտվությամբ Գրիգորը, որ արդեն բոլորել էր իր քսան տարին, վանքի ծառա Հակոբիկի ուղեկցությամբ՝ ծպտված, իբրեւ թափառող զուսան, շրջում է Հայաստանում, կամենում լինել նաեւ Անիում: Այդ ընթացքում նա ծանոթանում է Կճավա վանքի միաբան Մուշեղի հետ, որի դեմ, ինչպես նշվեց, նա հանդիմանական թուղթ էր գրել: Մուշեղի եւ Հակոբիկի հետ այցելում են Սյունիք, տեղեկանում Ցուրաբերդ գյուղի բնակիչների կողմից Տաթեւի վանքի կողոպտման եւ այլ արարքների մասին: Մուշեղը Գրիգորին խորհուրդ է տալիս առանց Եկեղեցու միջնորդության, անձամբ հաղորդակցվել Աստծու հետ: Գրիգորը, թեեւ անընդունելի էր համարում նրա հերձամիտ գաղափարները, բայց ներքուստ համակրում էր նրան, կամենում էր դուրս կորզել թոնդրակյանների համայնքից (էջ 65-68): Գրիգորը Մուշեղի ուղեկցությամբ լինում է Դվինում, ապա՝ Անիում: Նա չէր վարանում Մուշեղին համոզել իր ճշմարտության մեջ, որի առանցքն էր թոնդրակյանների եկեղեցամերժ վարդապետության անգոսնումը՝ որպես ամբարշտություն, խառնակության ոգի սերմանողի (էջ 79): Նրանք միասին այցելում են նաեւ Վաղարշապատ քաղաք, մտնում անշքացած Մայր Տաճար (էջ 81): Գրիգորը երկար շրջում է Անիում, ականատես լինում հոչակավոր Մայր տաճարի շինությանը, ապա մտնում քաղաքի շուկա (էջ 97)՝ վկա լինելով գերեվաճառությանը (էջ 111-112), որ կատարում էին օտարազգի վաճառականները (արաբներ, խազարներ):

Գրիգոր Նարեկացին իր ժողովրդի հարազատ զավակն էր, նրա «հոգին

բաց մատյան էր», եւ չէր կամենում այն «թաքցնել մարդկանցից ու Աստծուց» (էջ 120): Թեեւ Նարեկացու հոգին տենչում էր մոտենալ եւ հասնել Աստծուն, բայց «ախտավարակ էությունները» խոչընդոտում էին նրան (էջ 121): Չարակամները նրա կարգակիցներն էին՝ իրենց անվայել ու բարոյազանց արարքներով: Նրանք Գրիգորին մեղադրում էին միաբանին ոչ վայել աշխարհական պահվածքի, կանոնազանցումների մեջ: Հոգին լլկող կացությունից նրան ինչ-որ չափով հանում էր Մուշեղը՝ Նարեկացուն ներշնչելով. «Քո մեջ Աստված փորձելու է հանճարին» (էջ 122): Մինչդեռ Դրախտիկի հանդեպ տածած սերը չէր թողնում, որ Գրիգորն իր հոգին թողնի միայն Աստծուն: Նա համոզված էր, որ աշխարհը կատարյալ կդառնա, եթե գտնվի մարդու՝ աստվածանալու եւ Աստծու՝ մարդանալու հնարը (էջ 123): Նարեկացու երազանքների ու զգայուն սրտի փիլիսոփայության առանցքը մարդն էր՝ իր հոգսերով ու տառապանքներով: Նա տանջվում էր՝ տեսնելով Սյունյաց աշխարհում շինականների կրած տառապանքները, Աստծուն աղերսում ուժ եւ կորով տալ իրեն՝ ալեհույզ իրավիճակում ճիշտ կողմնորոշվելու համար: Նարեկացին համակրում էր սյունեցի շինականներին, որոնք համարձակվել էին ծառանալ Եկեղեցու դեմ: Միաժամանակ նա համոզված էր, որ ներքին երկպառակությունները «մեծապես վնասում են, թուլացնում երկրիս հզորությունն ու ուժը: Եթե վաղը օտարները մտնեն հողը Հայոց, որտե՞ղ ենք որոնելու հայրենյաց փրկարար ուժը, չէ՞ որ շինականն ու նախարարը այլեւս չեն միավորվի ընդհանուր թշնամու դեմ» (էջ 173): Հույժ արդիական է նաեւ Մուշեղի համոզմունքն առ այն, որ «մարդկային արժանապատվություն ունեցող մարդիկ կունենան նաեւ ազգային արժանապատվություն եւ, հետեւաբար, կպաշտպանեն իրենց հայրենիքը» (էջ 174): Երկուսն էլ թեեւ իրենց դարի հարազատ զավակն են, խոսում են մեզ հետ, կիսում մեր խոհերը, հոգսերը, մտատանջությունները:

Մուշեղը գրողի կողմից ներկայացվում է որպես Գրիգորի ուսուցիչ, որը նրան զգուշացնում է հնարավոր խարդավանքներից, նույնիսկ բանադրվելու վտանգից, միաժամանակ դրվատում նրան՝ համակելով կենսական ուժով ու եռանդով, լավատեսությամբ (էջ 175-176): Մինչդեռ Նարեկավանք վերադարձած Գրիգորին կարգակիցներն ընդունում են թշնամանքով՝ նրա տաղերում որոնելով «Տիրամոր երկրային նմանակին»: Բանսարկուներն ու նրանց դիտախույզները ակնդետ հետեւում են նրան: Գրիգորին հուսադրում էր վանքի խորախոհուն առաջնորդը՝ Անանիան՝ զգուշացնելով դավեր լարողներից, նաեւ հորդորում էր չհուսաբեկվել եւ պայքարել ճշմարտության համար: Գրիգորն իր սիրո մեջ մնում է անսասան՝ համոզված լինելով, որ Տիրամոր անունով տաղերգել է Դրախտիկին (էջ 179): Նա համոզված էր, որ իր ախոյանների ձեռքին «ամենաուժեղ եւ մահացու զենքը» իրեն վերագրվող թոնդրակյան տրամադրությունն է (էջ 179): Վանա լճի գեղատեսիլ ափին նա սրտամորմոք պահեր էր ապրում եւ դիմելով Բարձրյալին՝ բողոքում է, թե ինչու է մարդն այդքան արատավոր ու մեղքերով լցված, եւ ատելությունն ու դավաճանությունն են ներհակում սիրուն ու նվիրվածությանը (էջ

185): Նրա սիրտը շարունակում է տոչորվել երկու սրբության՝ Աստծու եւ Դրախտիկի միջեւ՝ ի զորու չլինելով հրաժարվել նրանցից: Դիմելով Աստծուն՝ նա հարցնում է, թե ինչո՞ւ է հանդուրժում, որ իր ստեղծած մարդը մնա սիրուց զուրկ: «Ի՞նչ անեմ հիմա, երբ սերն ավելի զորեղ է, քան իմ ուխտը» (էջ 193):

Անանիա Նարեկացին ջանում է ցրել Գրիգորի հակասական մտքերը, նույնիսկ մեղադրում թոնդրակյաններին պաշտպանելու մեջ, համոզում հրաժարվել Դրախտիկի սիրուց: Այդ կերպ Անանիան հույս ուներ մեղսազերծել իր տաղանդաշատ սանին (էջ 203), որը, սակայն, չի կարողանում հրաժարվել իր սիրուց: Գրիգորը մեղսամած իրականության զոհն է, երազում է, որ մարդը պետք է «բարձրանա մեղքերի, հանցանքների ճահճից: Պետք է մոտենա արարողի կատարելությանը, դառնա Աստծու իսկական նմանակը՝ գեղեցիկ հոգով ու մարմնով» (էջ 205-206): Աստծուց խնդրում է մարդուն հեռու պահել «կրքերից, ընչաքաղցությունից, անառակությունից, թալանելուց, պաշտոնը չարաշահելուց, գողությունից, մատնությունից, քենից ու նախանձից, իր նմանին նահատակելուց, տանջելուց, սպանելուց...» (էջ 212):

Վեպում Նարեկացին ծանր հոգեվիճակ է ապրում, որովհետեւ խախտել է Նարեկա ուխտին տված իր երդումը, չի հաղթահարել իր մարդկային թուլությունները, ուստի իր հոգին «ասպարեզ է ինքնաբզկտման, ինքնամարտության»՝ Դրախտիկի ամուսնության պատճառով (էջ 240-241): Նրան հուսադրում է Անանիան՝ ասելով, որ կորսված սիրո դիմաց ունի ասպվածային սերը (էջ 242): Իհարկե, Անանիան եւ Գրիգորը իրենց մտահայեցությամբ տարբեր են: Հակառակ Անանիայի հարմարվողականության՝ Գրիգորը կարծում է, որ «տաղերգուն եթե մարտիկ չէ, ո՞ւմ է հարկավոր նրա թեկուզեւ մեծ գործը» (էջ 246): Իսկ արդեն ծերունազարդ Անանիան իրեն փոխարինող էր համարում Գրիգորին (էջ 265): Իսկ վերջինիս հոգին դարձել էր «իրար հոշոտող խոհերի, զղջման, ողբերգությունների, դառնակսկիծ հառաչանքների մատյան, եւ նա մռնչում էր տիեզերքն ի վեր»՝ Աստծուն հաղորդելով աշխարհի ու մարդկանց «ահավոր մեղքերի», զեղծաբարո արարքների, ցավերի մասին (էջ 327): Գրիգոր Նարեկացու մեջ հետզհետե տիրապետող էր դառնում սեւեռուն միտքը, որ գրելու է իր ողբերգության մատյանը, իր «հոգու սուրբ գիրքը» (էջ 328): Եւ Գրիգորը շարունակում է երկնել իր հանճարեղ «Մատյան ողբերգության» պոեմը, որը նրան պետք է միացներ Աստծուն եւ ապահովեր կյանքի ծանրամեղ որոգայթներից: Նա համոզված էր, որ հավատն էր բուժելու մարդկությանը՝ նրան պարգեւելով կամք ու զորություն, նպատակ եւ հաղթանակներ տանելու հույսեր ու խաղաղություն (էջ 338):

Այժմեական են Նարեկացու խոհերը քրիստոնեական կրոնի վերաբերյալ: Նա արթմնի երազում երկխոսության մեջ է թոնդրակյան աղանդապետ Սմբատ Զարեհավանցու հետ, որին իրենից բաժանում էր գրեթե մեկ դար: Գրիգորը, որպես քրիստոնեության եւ Հայ Առաքելական Եկեղեցու նվիրյալ, Սմբատին անգոսնում է արյունոտ արարքների համար՝ միաժամանակ նրան դիտելով որ-

պես Աստծո սիրեցյալ եւ հայ ժողովրդի հպարտություն (էջ 342): Սմբատի համոզմամբ՝ թեեւ Գրիգորի ախոյանները նրան թոնդրակյան են համարում, սակայն նա թոնդրակյան է սրտով, իսկ բանականությամբ ու փաղանդով այդպիսին չէ (էջ 345): Գրիգորի կարծիքով՝ հավատն է «մաքուր պահում Հայոց ազգը» (էջ 352): Նա դեմ էր թոնդրակյաններին, քանզի նրանք իրենց գաղափարները ջանում էին հաստատել ուժի գործադրմամբ, այն դեպքում, երբ ինքը՝ արդարախույզ այդ հանճարը, ճշմարտությունը տեսնում է աղոթքի ու փաղերի մեջ եւ իր «Մատյանը» համարում իր հոգու եւ համայն մարդկության ողբերգությունը: Մինչդեռ շարունակվում են նրա դեմ հանիրավի պարսավանքները, գրպարտագրերը՝ վերստին պահանջելով կարգալույծ անել եւ բանադրել Նարեկացուն (էջ 359): Բայց երբ ամբաստանողները մտնում են նրա խուցը, որպեսզի տանեն դատական բարձրագույն ատյան՝ դատաստան տեսնելու, «հիանում եւ ապուշ են կտրում եւ ընկնելով նրա ոտքերը՝ թողություն են խնդրում, իսկ ատյանի անդամները հրաժարվում են իրենց «չար խորհուրդից»» (էջ 366): Եւ Նարեկավանքի միաբանությունը մնում է մաքուր ու անբիծ՝ զարկ տալով գիտական ու կրթալուսավորական գործընթացներին: Այդուամենայնիվ, Գրիգոր Նարեկացին չէր կարող մնալ վանական աղոթամրմունջ լռության մեջ: Նրա հոգին բզկտող մտամորմոք խոհերը չէին համակերպվում վանական կյանքին, նրան գրավում էր երկրային կյանքի եռուզեռը, ինչը պետք է ոտոփեր իր վշտակոծ հոգին, օգներ Աստծուն մոտենալու, աշխարհի «կնճռոտ հարցերը լուծելու» նրա որոնումներում, որոնք պետք է մեղսազերծեին մարդկանց ու աշխարհը, թեթեւացնեին շինականի վիճակը, վերացնեին միմյանց հակընդդեմ հավատների ողբերգական հակամարտությունը, օգնեին հալածահար փոքր ազգերին, որոնք ձգտում են պաշտպանել սեփական հայրենիքը եւ ապրել ազատության մեջ (էջ 371-377):

Գրիգոր Նարեկացին իր հոգու ճարակը գտավ հանճարեղ «Մատյան ողբերգության» մեջ, որը նրա ապրած ողբերգության հայելին է: Սակայն լավատեսական խոհերն են պաշարում նրան: Այժմեական սուր հնչեղություն ունեն Գրիգոր Նարեկացու խոսքերը այն մասին, որ մարդն իր հայրենիքի տերն է, եւ այն «անվտանգ եւ գեղեցիկ պահելու համար մարդը պարտավոր է նաեւ զինվոր լինել, քանզի զինվորի մեջ միավորվում են երկրի եւ՛ տերը, եւ՛ ծառան, եւ՛ փրկարարը» (էջ 380): Նարեկացին նաեւ կոչ է անում ամուր կառչել հավատին, առանց որի «իմաստազրկվում է մարդկային կյանքը» (անդ):

Գրիգոր Նարեկացին իր հոգու սրբազան վաստակը՝ «Մատյան ողբերգության» պոեմը հյուսում է «Հայրենիքի կենաց համար... Ազգի, ժողովրդի կենսունակությունը տեսնելով միասնական մտածողության, հավաքական ուժի, ժողովրդական ազնվության եւ հավատի ամրության մեջ... Ես հավատում եմ հայ ժողովրդին, քանզի քրտինք թափելը նա գերադասում է արյուն թափելուց... աշխատելը՝ կողոպտելուց» (էջ 382):

Եւ ավարտելով Մատյանը՝ Գրիգոր Նարեկացին հավիտյանս փակում է իր

աչքերը: Նրա աճյունն ամփոփվում է Նարեկավանքում, որը, ավաղ, ավերված է: Սակայն անմահ է Նարեկացու հոգին, ժողովրդի սրտում նրա հիշատակը հավերժ պահպանվում ու սրբացվում է: Նրա սրբալույս երկը՝ «Նարեկը», ինչպես ճիշտ կերպով բնորոշում է Մ. Սարգսյանը, «Սուրբ Գրքի չափ զորավոր է, հինավուրց վանքի նման սրբազան» ու հավերժազո, քանզի «նրանն է ապագան, անմահությունը...» (էջ 383):

РЕЗЮМЕ

В историческом романе Мкртыча Саргисяна - "Григор Нарекаци" отображаются жизнь и душевные терзания гениального армянского поэта Григора Нарекаци /951-1003/. На фоне реальных социальных процессов расмотренны идеи гуманизма, проблемы спасения души, поставленние Григором Нарекаци. Поэт рисует впечатляющую картину родной страны. В своей лирической поэме-"Книга скорбных песнопеннй" через собственные пережевания и самобичевание Нарекаци отражает моральный и духовный уровень мира. В романе М. Саргисяна довольно оригинально показно, что поэт был связан с земной жизнью, его душа пронизана любобью, он любит жизнь и берит в человека. Произведения Григора Нарекаци пронизанны надеждой просветления земного мира. Он убежден, что вера исцелитель человечества, в том числе и родного Армянского народа.

SUMMARY

The life and mentel anguishes of Armenian great poet Grigor Narekatzi /951-1003/ was described in Mkrtich Sargisyan's novel "Grigor Narekatzi". The ideas of humanism, the problems for saving the soul that regarded under the real social proceses was presented by Grigor Narekatzi. The poet described the beauty of his Motherland. The moral and spiritual level of the world of Narekatzi was reflected in his own experienses and self-flagellations in his lyric poem "The Book of Tragedy". M. Sargisyan mentioned that the poet was connected with the earth life and his soul pierced with love, he liked the life and belived in people. He was sure that the faith recovered the humanity and the Armenians as well.